





ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմսարի» օրաթերթի հավելված

1991 թ. ՀՈՒՆԻՍ, № 34: ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

ԱՂԵՏԻ ԳՈՏԻ



Անհեախան. Անհիկի պողոտա (23. 12. 1988 թ.)



ԽՆԿԻ ԾՈՒՆ
(1988 թ. դեկտեմբերի 7)

Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ Օ

Էլ վե՛րջ, հերիք է:
Դու բավ է լացես:
Բավ է արյունդ, արցունքդ, ազգ իմ,
քանի լայիս ես՝ այն շատանում է:
Աստված, չե՛ս հոգնել, ուրիշ խաղ չունե՛ս,
այս ի՞նչ ես անում:
Դու... վրիպո՛ւմ ես,
թե՛ լավ ես նշան բռնել թիրախիդ...

Բ

Մի սովորույթ կա տխուր ծեսերում.
Երբ շիրիմներին կրակ են դնում,
թափվ լի կրակ՝ թարմ հողաթմբին,
ու խունկ են ցանում կրակի վրա,
եղնող ծխի հետ մտքում ասում են.
— Ողորմի իրեն: Վերջինը լինի:
Երբ խունկի ծուխն է ողբի պես ելնում,
ոչ-ոք չի լայիս.
Ծուխն ասես մեկից լացը... կտրո՛ւմ է:

Գ

Ես ի՞նչ խունկ-բառեր ասեմ, որ ծխան,
ու լացդ իսպառ կտրվի, ազգ իմ:
(Էլ բառի տե՛ղ կա...
Էլ բառի տեղ ես թողել, ո՛վ աստված):

Լուսանկարում պատկերված այս տեղամասում աշխատում էին նաև կանադացի և ամերիկացի փրկարարները:

Լուսանկարը՝ Վ. ԿՈՏՈՎԻ




ՄԻՆԻՍ

Օտ

Տարածաշրջանի պարկի աղետի աղաչյն օրերին:

Լուսանկարը՝ Հմ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



ՎԱՐԴՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆԸ
 ծնվել էր 1939 թ., օգոստոսի 16-ին, Սիրում էր իր աշխատանքը (բանվորուհի էր, ռեզիստորների գործարանում), երկու զավակներին, սակայն սերը սիրասուն թոռնիկի նկատմամբ վեր էր բռնորդից:

Գեկտեմբերյան շարաքս սովի այդ օրը նա լուսանկար շատանը կնքեց իր մահկանացուն 6 ամսական թոռ-



նիկի՝ **ՕՂԱՆՆԱՅԻ** և սիրելի հարսի՝ **ՌՈՉԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ** հետ:

Ռոզան ծնվել էր 1967 թը վականին Արթիկի շրջանի Նոր Կյանք գյուղում: Թե՛ ընտանիքում, թե՛ ռեզիստորների գործարանում, ուր աշխատում էր, նա վայելում էր ջերմ սեր ու հարգանք, քանզի համեստ, գործունյա և բարի անձնավորություն էր:



ՕՂ, ԻՆՉ ԶԱՐ ԲԱՒՏ

Միակ զավակ էր ԱԼԻՆԱՆ (ԹԱՄԱՐԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ), միակ մխիթարանքս ու պարծանքս: Ծնվել էր 1964 թվականի սեպտեմբերի 30-ին, ավարտել Բ. Ղարբջյանի անվան դպրոցը: Սովորել է նաև երաժշտական դպրոցում: Աշխատում էր տրիկոտաժի ֆաբրիկայում որպես կարող բանվորուհի: 16 տարին դեռ չբավականացավ: Ապրում էր խաղաղ, երջանիկ ամուսնական կյանքով: Ծնեց առողջ, կարմրաթուշ բալիկներ: Փոքրիկը՝ ԴԱՎԻԹԻԿԸ, որ ընդամենը 6 ամիս ապրեց, իսկական Դավթի. մեծանում էր ժամ առ ժամ: Ավաղ, այդ փոքրիկ «հսկայից» մեկ ոսկորը



միայն գտնվեց: Իսկ դուստրը՝ Ալինա բնավ չգտնվեց: Հրդեհն էր լափել նրան, վրահասել մեզանից շուտ:

Ավագ զավակը՝ ԱԼԻԿԸ ևս իր մահկանացուն կնքեց փլատակների տակ, ընդամենը 5 տարեկան դարձած, նրանց հետ նաև տատն ու հորեղբոր աղջիկը:

Չար բախտը խնայեց միայն Ալինայիս դստերը՝ Սիմային, որն այդ ժամանակ № 34 դպրոցում էր:

Դաժան ճակատագրի շարխաղ. Ալինան մեծացավ առանց հոր, նրա դուստրը մեծանում է առանց մոր: Նա բանաստեղծություններ չի արտասանում ձմեռ պայպի ու մանուշակի մասին, ինչպես մյուս տասնամյա մանուկները, այլ՝

Կարկուտը ծեծած տեղն է միշտ ծեծում, ո՞ր մեղքի համար,
 Մենք այլոց տունը երբեք չենք քանդել,
 Էլ ինչու՞ պիտի մեր տունը քանդվեր:
 Մեր պաշտած հողը մեզ իր գիրկն առավ,
 Մեր պաշտած սարը մեր զխին ընկավ...

ԵՎԱ ՄԵԿ ԴՊՐՈՑ ԾԱՐԲ ՄՏԱՎ

ՈՒԽՏԱՎՈՐԻ ԵՐԿՑՈՒՂԱԾՈՒԹՅԱՐ

Հայ և լեհացորացի շինարարների համատեղ ջանքերով, նրանց բարեկամությամբ ու եղբայրությամբ մաքրված, խաղաղ ու կապույտ երկմքի ներքո նորովի հպարտորեն վեր խորացավ Ս. Սպանդարյանի անվան № 4 միջնակարգ դպրոցի գեղեցիկ շենքը:

Վերջապես եկավ այնքան ցանկալի, հույզերով ու սպասումներով լի ուրախակի օրը, երբ սիրելի դպրոցի ներսում նորից հնչեցին դողալնուն գանգերը՝ ազդարարելով, որ անվճար է մեր հոգևոր քերքը, որ արհավիրքի դաժան հարվածներից չի ցամաքել մեր գիտելիքների մայր երակը, որով օրեցօր սմվում և գորեղանում է հայ մանուկը՝ ամեն տեսակ մահվանց ու ավերածուծյանը հակադրելով մեր բազմաշարք ու ամենագոր մետրապամ սուրբ գրերը:

... Դպրոցական նորակառույց շենքի կարմիրին հատված խոտուն հայացքներ, արցունքներից խոնավացած աչքեր, որոնց մեջ՝ նաև անհուն գորով ու երկրպագություն հարազատ դպրոցի նկատմամբ: Եվ հնչում է դպրոցի դիրեկտոր Ս. Պետրոսյանի հուզված ձայնը՝ ուղղված սիրելի սաներին, ուսուցիչներին, ծնողներին և շինարարներին.


— Ահավոր երկրաշարժը ավերեց մեր հայրենի քաղաքը, հարազատ դպրոցը: Հայ ժողովուրդը վիշտը արտում լծվեց ստեղծագործ աշխատանքի: Այսօր շնորհիվ մեր եղբայրների անշահախնդիր օգնության, ապաշինվում են մեր վերքերը... հայ մանուկը նորից մըտնում է հարազատ դպրոց, ուր սկսվում է ընդհատված ուսուցումը:

Աշակերտներին իրենց սրբտի ջերմ խոսքերն ու բարի մաղթանքներն են ուղղում Մուկոյան շրջանի ժողկրթբաժնի վարիչ Ծ. Ղազարյանը, շինարարական գնացքի պետ Ս. Դ. Կիսիսկովը, ծնող Ա. Դիա Մովսիսյանը, երրորդ դասարանի աշակերտուհի Վարդուհի Պետրոսյանը:

Անհունորեն հուզիչ էր առաջին դասարանում՝ Սաթենիկ Պակյանի արտաբուխ խոսքերը.

— Սիրելի ուսուցիչներ և ծնողներ՝, ճիշտ է, մենք դեռևս փոքր ենք և չենք կարող լեհնակակար կառուցել, սակայն կիսնեք կարգապահ և կսովորենք լավ, որպեսզի հատուցենք ձեր բոլորի այն ջանքերի համար, որ ցուցաբերվել է դպրոցը կյանքի կոչելու համար: Ի՞նչ ակեկոծություն կար ներկաներից յուրաքանչյուրի արտում, արհավիրքից հետո հարազատ անգամ հարազատ դպրոց ուխտավորի երկյուղածությամբ ուր դնող աշակերտի և ուսուցչի հոգում...

ԱՆԱՀԻՏ ՆՈՐԻԿՅԱՆ
 16. 11. 89 թ.



Աղջիկա՝ ԼԵՆԱ ԾԱՌՈՐԻ
 ՎԱՐԴԱՆՅԱՆԸ գուլպայի ֆաբրիկայի գործող երրորդ արտադրամասի բանվորուհի էր: Այդ շարաքստիկ օրը իր հանգստյան օրն էր, գնաց հավերժ հանգստի...

Փեսաս՝ **ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ավտոարտոց էր № 2984 շարասյունում: Նրան իր ավտոբուսով ուղարկել էին Երևան՝ դաբարապահ հարցում աշակցու-

թյուն ցույց տալու: Դեկտեմբերի 6-ի երեկոյան վերադարձավ, որ երեկաներից կարտան առնի: Կարող արտում երկրաշարժի գոհ գնաց:

Բնակվում էին Բուլվարային փողոցի № 10 շենքում: 8-րդ հարկում էին: Երկրաշարժի պահին տանն էր նաև նրանց 10-ամյա տղան, որ ոտքից վիրավոր հրաշքով միայն փրկվեց...

ԵՊՐԱՔՍԻ ՎԱՐԿԱՆՅԱՆ



ԱՐՈՒՍԻԿ ԱՇՈՏԻ ՓՈԻՉՅԱՆ
 Ծնվել է 1978 թ. հոյեմբերի 3-ին, սովորել Բ. Ղարիբջյանի անվան № 9 միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանում: Տարեկի հետ հարազատ դասընկերուհիներ էին, մանկապարտեզ և միասին են հաճախել, միշտ անբաժան իրարից: Արուսիկը սովորում էր երաժշտական դպրոցում ու շատ նպատակներ ուներ, շեղեցիկ երազներ, սակայն... ՏԱԹԵՎԻԿ ՀԱՅԿԻ ՆԱԼԲԱՆԻՅԱՆ

Ծնվել է 1978 թ. հոկտեմբերի 13-ին, սովորել Բ. Ղարիբջյանի անվան № 9

միջն. դպրոցի 4-րդ դասարանում: Կապուտաշյա, գեղեցիկ այն աղջիկը շատերի ուշադրությունն էր գրավում: Կատակասեր էր, ընթերցասեր: Ազատ ժամերին միշտ զբաղվում էր ընթերցանությամբ: Վնայած փոքր տարիքին, առանձնահատուկ ոգևորությամբ մասնակցում էր մեր ազգային շարժման միտինգներին, խոսում հայրենասիրությունից ու ազգասիրությունից, վարակում ընկերներին նույն ոգով: Գեկտեմբերի 7-ին մայրը ուղարկեց նրան դպրոց, թեև Տարեկի չգիտես ինչու չէր ուզում գնալ: Գրեց ու... չվերադարձավ:

ՈՂԵՐԳՈՒԹՅԱՆ ՄՍՏՅԱՆՆԵՐ

«Հիշողության համարներն իմ սեղանին, Ողբերգության մատյաններ են իրեղեն, Իմ Հրաչն է, նրա Տիգրանն ու Անին, Արևային հայացքներով լուսեղեն: Ինձ են նայում ծանոթ, անծանոթ դեմքեր, Դաժան բախտի նույն կայծակով շանթաված Մառած դեմքեր, սառած արյուն անոթներ՝ Կոտորվեցին, ոնց հերոսներ պարտված: Արյունակից քույր ու եղբայր, բարեկամ, Իրար գրկած անդարձ անդունդ նետվեցին, «Մայր» բնության ձեռքի խաղով շարակամ, Հավերժության գիրկը ընկան, բնեցին: Մակայն, ինչպես երկնային ստուպներ, Եկան իջան «Հիշողության» էջերին, Դարձան անխոս անմահության վկաներ, Ինչ հատուկ է հայոց գոհված քաջերին: «Հիշողության» համարներն իմ սեղանին, Ողբերգության մատյաններ են իրեղեն, Իմ Հրաչն է, նրա Մարգոն, քո Անին, Տուն են դարձել հայացքներով լուսեղեն:

ԿԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երկրաճարժ

(Սկիզբը՝ № № 32-33-ում)
ԱՊՐԵՆԵՔ ՊԻՏԻ

Որ այս մեր մի բուռ,
Մեր օջախի հուր
Ու մեր ձեռքի բուռ:
Հայաստան երկրին
Գաղտնիք է եկել:
Ապրենք պիտի,
Որ նորաճար
Երկիրը հայոց,
Ապրենք պիտի,
Որ գորաճար
Երկիրը հայոց,
Որ գինվորների
Թիվը շատանա,
Որ շինարար
Քար դենբ քարին,
Պատր բարձրանա:
Ապրենք պիտի,
Որ անկախության
Իրազարկ մեր
Իրենքին մենք էլ,
Որ Լարաբաղին
Փրկելու համար
Կռվենք մենք էլ:
Ապրենք պիտի,
Որ բունցվող
Մեր երկրի համար
Ջիլ չպակասեր:
Ապրենք պիտի,
Որ փորձության մեջ
Ջիլ չպակասեր:

Որ չմնար
Մեր տեղը դատարկ,
Քաղաքն ամայի
Ապրենք պիտի,
Որ չուրախանար
Թշնամիք մեր շար:
Եվ ինչ էլ լինե՛ր
Ապրենք պիտի:
Հողը կարոտ է
Հերկող ձեռքերի:
Քաղաքն իմ փոշոտ
Կարոտ է հիմա
Սզնող ձեռքերի,
Փրկող ձեռքերի:
(Ամենափրկիչը
Նման է, ավաղ,
Փշրված սրտի):
Եվ ինչ էլ լինե՛ր
Ապրենք պիտի...
Շփոթված, մոլոր
Աչքեր կան այնքան:
Հոգիներ կան, որ
Սեղծ են պատվել:
Եվ ինչպես անել,
Որ որբուկը այս
Վնասահատվի...
Ու դրա համար
Ապրենք պիտի:
Եվ ինչ էլ լինե՛ր
Ապրենք պիտի...
Եվ ինչ էլ լինե՛ր
Մենք պրենք պիտի...
Կումայրի, 1991 թ., մարտ




ԱՐՊՈՒՐ ԵՎ ԱՂԱՍԻ ՄՎՈՅԱՆՆԵՐ

Գրում է մայրը


Իմ անուշ բալես, իմ կյանքի ծարավ բալես: Երկար սպասեցի ճանապարհիդ, բայց իզուր անցան սպասումներս: Հիմա նոր եմ գգում, նոր եմ սթապիլե, որ 1988 թվականի այդ արյունոտ դեկտեմբերի 7-ը երազ չէր: Դատարանովում էիր բանակ մեկնել և ինձ հանգստացնում էիր, թե շուտ-շուտ նամակ կգրես: Զե՛ղ հաշտվում մեր ժամանակավոր բաժանման հետ, իսկ հիմա... Ահա այդ էիր մեծացել ու աշխատում էիր ինձ երեք մեծակ չորդան: Մի՞նչդեռ այս օր մեծ-մեծակ եմ, առանց քեզ ու եղբորդ: Երկուսիդ էլ դեմքին:

այն սև օրը կորցրի: Գոնե՛ք քո տեղը գիտե՛մ ու արցունք եմ թափում շիրմաքարիդ, իսկ եղբորդ մինչև օրս չեմ գտել: Երկուսդ էլ սովորում էիք Ծի բազի անվան թիմի հարցում: Դպրոցն ավարտեցիք բարձր առաջադիմությամբ, եղբայրդ էլ աչքի էր ընկնում իր գեղն ցիկ ու գույլով ձայնով: Սիրում էր երգել՝ «Մայրս տանը մեծ-մեծակ, ինձ կապան շարունակ...»: Հիմա երգի տողերը իրականություն են դարձել, սպասում եմ մեծ-մեծակ, սպասում եմ կորած որդուս վերադարձին: Գոցն մի օր էլ իմ դուռը բացվի ու ներս մտնի քեզ, գեղեցիկ ժպիտը քեզ ու եղբորդ: Երկուսիդ էլ դեմքին:



ԳԵՎՈՐԳ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ (ծնված 1972 թ.)

Դաժյան արձակուրդը անավարտ թողեց նաև թիմի անկարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Գևորգ Մաթեվոսյանի վարազատի և Ռուզաննայի միակ որդու կյանքը: Ի՞նչ երազներ ուներ նա, ի՞նչ լուսն հավատ... Ի՞նչ գեղեցիկ ու հուսովի պատմակ էր... Ի՞նչ քան էր սիրում կյանքը, մարդ կանց, հարազատներին, ընկերներին... Երազում էր պատմաբան դառնալ, պարզել իր ազգի պատմության սպիտակ բծերը: Երազում էր, ավա՜ղ... Հենց պատմության ժամին էլ, դաս պատասխանելու պահին ճակատագրական վայրկյանները վրա հասան: Դպրոցի շենքը, որ այնքան սիրելի ու հարազատ օջախ էր Գևորգի համար, վայրկյանների ընթացքում վերածվեց փլատակների կույտի, դարձավ գեղեցիկ: Միայն Գևորգին դասարանից 12 պատանիներ ու աղջիկներ դարձան անմեղ զոհեր: 17-ը չորսորդ ճարձք հետացան կյանքից, չսպասող վերջ թողնելով հարազատների, բարեկամների, բոլոր քարի մարդ կանց կրտսերում: Ու հիմա միակ սիրտանքը հուշն է նրանց մասին, մեր չխամրող հիշողությունը: Հուշով են ճորհանք ապրում այս աշխարհում: Հիշենք բոլոր անմեղ զոհերին ու նրանց հետ՝ Գևորգին՝ այս լուսն, այս հրմազի պատանուն:



ԳԱԳԻԿ ԺՈՐՈՅԻ ԱՍՍՏՐՅԱՆ

Կան մարդիկ, որոնց մասին ասում են. շրջապատի մարդ էր, ընկերության մարդ: Ծիշտ է, հաճախ այդ շրջապատի մարդիկ այնքան են տարվում ընկերներով, որ մոռացության են տալիս այնպիսի սրբությունը, ինչպիսին ընտանիքն է: Մարդիկ էլ կան, որոնց համար առաջ լինելու ենք էլ վատ չէ: Եվ հազվադեպ քերն են, որոնք և գերազանց ընտանիքի հարց են և գերազանց ընկեր: Այդպիսի անձնավորություն էր (ցավոք, արդեն անցյալ ժամանակով) Գագիկը: Երգն ու երաժշտությունը, կատակն ու սրախուսությունը անբաժան էին ընտանիքից... Գագիկ Ասատրյանը ծնվել է 1950 թվականին, Լեհիստանում: Սովորել է ՆՊ 18 միջնակարգ դպրոցում, ապա զին ծառայությունից հետո ուսումը շարունակել Ս. Սաֆարյանի անվան շինարարական տեխնիկումում: Աշխատում էր «Գյուղջիմ» № 24 ՕՄԾ-ում: Նրա երիտասարդ կյանքի թեղծ էլ (իր հազարավոր հայրենակիցների նման) կտրեց անաստված արհավիրքը: ...Գագիկի գերեզմանի մոտ հաճախ կարելի է տեսնել երկու սևագետ կանանց, մորը՝ Մարտիկային և կնոջը՝ Արմենուհուն: Նրանց աչքերում անասելի թախիծ կա: Նրանք ողբում են իրենց որդու ու փոխանու կորուստը:



ԱՎԵԼԻ ԾԱՆՐ, ՔԱՆ ԻՆՃԱՐԿՏԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծնվել է 1937 թվականին: Վաղ հասակից զրկվել է հորից և մաշկի վրա զգացել անհայրության դառնությունը: Ուսման նկատմամբ ծարավը նրան տանում է Ռուստովի երկաթուղային և ճանապարհա - տրանսպորտային ինստիտուտ, որը ավարտելուց հետո տեղափոխվում է հայրենի քաղաք և աշխատանքի անցնում կոմպերտների գործարանում որպես շինարարական բաժնի պետ: Սիրում էր իր աշխատանքին ու ընկերներին, հյուրասեր էր ու միշտ բարյացկամ, նվիրված հայր ու սիրված ամուսին: Նախքան շարադես երկրաշարժը, ծանր հարված ստացավ նրա առողջությունը: Ծանելով ծանր ինֆարկտը, անմիջապես դուրս էր գրվել հիվանդանոցից սիրտ տալով հարազատներին, որ իրեն ոչինչ էլ չի պատահել, իսկ իրականում խառնվածքով գործունյա էր ու անզգաբար և զենուս ամբողջությամբ շապաքինված շտապել էր սջխատանքի, որտեղ և ավաղ կնքել էր իր մահականացուն:



ԱՇՈՍԱՐԸՆ ԱՄՓՈՓՎԵՅ ՀՈՂԱԿՈՒՑՏՈՒՄ

Մեր կապուտաշյա, բարի ու ազնիվ ՆԱՐԻՆԵ, այս, թե իմանաս, որքան դժվար է առանց քեզ... Մեր հեմարան ու հույս, մեր սեր ու կարոտ, մեր բնքշանք ու գորով, մեր շատ մեծ ու շատ փոքր երեխա... Ծնվել էր 1973 թ. հունվարի 4-ին, սովորում էր № 23 դպրոցի 9-րդ դասարանում: Այդ օրը դպրոցից ազատ ծամից ստուն էր շտապել, շտապել էր փոքր քոջ մտո: Ծտապել էր... մահվանը ընդառաջ: Դու դարձար մեկն այն անմեղ զոհերից, որոնք չհասկացան, թե ինչ կատարվեց: Բո 16 գարունները այուն արած փրկեցիք բույրերիդ, որոնք այսօր իրենց ողջ մնալը մեղք են համարում: Այնքան քնարա կան էիր ու նուրբ, այնպես անմեղաբող և փրկված էիր բոլորին, որ... դարձար նվիրումի զոհը: Ու հիմա քո բոլոր երազները դարձել են մի փոքրիկ հողակույտ, իսկ մենք ամեն օր գրկում ենք այդ անշունչ հողը ու ողորմ, ողորմ: Ապրում ենք, քանզի պարտավոր ենք կատարել քո գերազույց իվճի՝ սեփական ուրբերի վրա կանգնեցնել բույրերիդ: ՖԵՆԻՔՍ, ՌԱՅԱ, ՄՍՐԻՆԵ, ՆԵՂԻ ԲԱԴԵՍԱՆՆԵՐ



ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ ԲԵԶ

ՍԵՂԱ ԱՐԳՍԻ ՄԻՄՈՆՅԱՆԸ ծնվել է 1925 թ. մայիսի 7-ին, Լեհիստանում: 16 տարեկան էր, երբ պայթեց անավոր պատերազմը: Տեսավ պատերազմի դառնությունները, որը փշրեց երիտասարդ աղջկա կյանքը: 1950 թվականից ամուսնացավ, ունեցավ 6 երեխա: Սիրված ու հարգված կին էր: Կա թողնում էր հասկանալի դիմացինին, կիսել ուրիշ վիշտը, օգնության հասնել բոլոր կարիքավորներին, կարելից էր ամենքին: Բայց այստեղ էլ Սեղան չկարողացավ լիարժեք երջանկություն վազել: փոքր տղան 9 ամսական էր, երբ մահացավ ամուսինը: 1968-ից տանջանքով ու տանապանքով, լուրջ դժվարությունների հաղթահարումով պահեց ու մեծացրեց 6 որբերին: Տեսավ միայն չորս երջանկությունը, կիսելով նրանց վիշտն ու ուրախությունը: Փոքր տղային ուղարկելով զին վորական ծառայության, փոխվեց կյանքը Սեղայի համար: Արցունքներն աչքերին սպասում էր որդուն և միշտ ասում. «Որիս զա բանակից, տեսնեմ նրան և նոր միայն մահը դժվար չի լինի ինձ համար»: Այս էր նրա միակ ցանկությունը: Եվ իրոք այդպես էլ եղավ: Տղան գորացրվեց և մայրը ապրեց իր կյանքի վերջին ուրախությունը:

ԲՆԱԿԱՐԱՆԱԾՈՒՑԻ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՃԱՏԵՎ ԵՂԱՎ

ՊԱՏՈՒՄ Է ՄԱՑՐԸ




Հինգերորդին, որ տան նախկին էր, 90-ամյա ԼՈՒՍԻԿ ԱՌԱՔԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ այդպես էլ չհաջողվեց գտնել: Նա այրվեց, մոխրացավ: Լուսանկարն անգամ չի պահպանվել: Երկուսական տը դա և աղջիկ մեծացրած Լուսիկ տատիկը, որ 15 թոռներ ուներ, անվամ ու դաստիարակ վամ էր Գյումրվա գեղեցիկ ավանդույթներով և դրանց կրողն ու պահպանողն էր: Սոսկ հիշողություններ են մնացել, ցամփի զգացողությունը, որ երբեք չի դարձնվում:



գատների և մերձավորների հոգում թողնելով երբեք չսպիսացող մի բաց վերք... Լուսիկի հարսը՝ ՕՉԱՆՆԱ ՍԵՐԳՈՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ծնվել է 1932 թվականի դեկտեմբերի 5-ին: Աշխատել է միկրոէլեկտրաշարժիչների գործարանում, վաղելի գործընկերների, իր ընտանիքի անդամների, մերձավորների ու հարևանների սերն ու հարգանքը: Օհաննան թոռնիկի՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ հետ իր մահկանացուն կնքեց «Արագած» ճեմափողոցի № 2 շենքի № 12 բնակարանում: Լուսիկի մյուս թոռը՝ ԱՆԱՀԻՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆԸ ծնվել է 1978 թվականի սեպտեմբերի 18-ին: Սովորում էր Թումանյանի անվան դպրոցի



4-րդ դասարանում: Նոր միայն սկսել էր պարսպել սիրած մարզամենով՝ կարատեով, երբ ամսասակի և այնպես անհեթեթ կերպով ընդհատվեց կյանքը: Պայուսակը ձեռքին չենքից դուրս գալուն պես, ցնցվեց գետինը և երեխան կույ գնաց մահվան գիրանների:



Լավ դաստիարակված և քսցած ընդունակություններով օժտված, ժամանակից շուտ հասունացած ու զարգացած երեխա էր: Ուսուցիչները հպարտանում էին նրանով և Հովհաննեսի հետ լուրջ հույսեր էին կապում: Լուսիկի մյուս թոռը՝ ԱՆԱՀԻՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆԸ ծնվել է 1949 թվականի դեկտեմբերի 18-ին: Աշխատում էր մոդելա



յին կոշիկների № 2 ֆաբրիկայում: Իր գործի գիտակ անձնավորություն էր, երեք երեխաների սիրված մայր, լավ տղամետուհի: Ձոռվեց աշխատատեղում... Որքերգար զոհված Լուսիկի մյուս թոռնուհին ՔԱԳՈՒՇ ՍԵՐՅՈՒՄՅԱՆԻ ՕՍՀԻՆՅԱՆՆԵՐ էր: Թագուշը ծնվել է 1948 թվականի հոկտեմբերի 8-ին: Երկար տարիներ աշխատել է տրիկոտաժի արտադրական միավորումում: Ձոռվել է «Վարդապետ» կառուցված բնակելի շենքում, որ ընդամենը մի քանի ամիս էր, ինչ բնակություն էր հաստատել: Բնակարանամասի ուրախությունն այնպես կարճատև էր, որ 18-ին: Աշխատում էր մոդելա

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ

ԵՐԶԱՆԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻՆ

ԶԿԿ ԵՐԵՎԱՆԻ ՍՊԱՆՊԱՆԻ և շրջաօրհանի շրջանում և շրջաօրհանի շրջանում խրախուսելի նախաձեռնություն են հանդես բերել մեր քաղաքի վերակառուցմանը ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

Օրերս կուսընկերների կողմից քարտուղար Մ. Գեվորգյանը, շրջաօրհանի գործկոմի նախագահի առաջին տեղակալ Վ. Շապարյանը և իրավախորհրդատու Վ. Սաֆարյանը եղան ԶԿԿ Լենինականի քաղկոմում, զրուցեցին առաջին քարտուղար Ս. Սարգսյանի հետ և ստանձնեցին Ավ. Իսահակյանի փողոցի բարեկարգման աշխատանքների կատարումը: Նրանք խոստացան երկու ամսում իրենց ուժերով վերականգնել 350 քառակուսի մետր տարածություն, վերականգնել պուրակի նախաբերդաշարժյան տեսքը: Սա առաջին նախաձեռնությունն է, որը անշուշտ մեծ օգնություն կլինի աղետից տուժած մեր քաղաքի համար:

ԿՊԱՏՐԱՍԵՆ 200 ՏՆԱԿ

Այլ Մյանիկյանի անվան կահույքի ամ-ի կոլեկտիվը դեռևս անցած տարվա դեկտեմբերից լուրջ ուղղությամբ է դարձնում հանրապետության աղետյալ գոտում անօթևան մնացած մարդկանց տեսակներով ապահովելու գործին: Միավորման Մասիսի մասնաճյուղում ստեղծվել են հատուկ բրիգադներ, որոնք խոստացել են մինչև տարվերջ պատրաստել 200 տրեմակներ: Դրանցից 55-ն արդեն ուղարկվել է աղետի գոտի:

ԼԵՆԻՆԱԿԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայէլեկտրաշարժիչ ամ-ն Լենինականի «Միկրոշարժիչ» և «Մագնիսահաղորդակ» գործարաններում աշխատողների համար պատրաստում է 20 ժամանակավոր կացարաններ: Բացի այդ, ստեղծվել է 15 հոգուց բաղկացած բրիգադ, որը ամեն շաբաթ և կիրակի Լենինականում մասնակցում է շինարարական աշխատանքներին:

ԾՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ավարտին են մտնում Ծիրակացի փողոցի վրա կառուցվող 120 տեղանոց նոր մտքամակարարտեզի աշխատանքները: Հրազդանցիների համակարծակի մեկնված բարեկամական ձեռք անակարարելի հույզի և երախտագիտության անասի զգացումն անաշացրեց ժողկրթբաժնի աշխատակիցների մոտ, երբ նրանք Լեհիմական բերեցին մամկանարտեզի համար նախատեսված տնակներն ու քառասուն հազար ուրբու կա հավորանքը: Հավաքման աշխատանքները Ս. Սահակյանի ղեկավարած տեղացի շինարարների հետ կարճ ժամանակում իրականացրին Հայաստանի մոտ տասնորոշի № 1 շարժական մեքենայացված Ռ. Հովհաննիսյանի ղեկավարած շարապյան Հրազդանի տեղամասի սանտեխնիկներ Կ. Ավագյանը ու Հ. Կոստանյանը, գորող բանվոր Ժ. Բարակյանը: Վերջիններս մտադրվել են վերանորոգել նաև № 2 և խոսքի խանգարում ունեցող երեխաների դպրոցների ջեռուցման սխեմաները: Հրազդանցիների վերաբերմունքն ազգասիրության ու ազգասպասարկության վառ օրինակ է:

Լ. ԿՈՍՏԻԿՅԱՆ
7. 11. 89



Զանգեզուրի գեղուհին

ԼՈՐԵՆԱ ԳԱՌՆԻԿԻ ՂԱՋԱՐՅԱՆԸ (ՀԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ) ծնվել է 1951 թ., Գորիսի շրջանի Խնածախ գյուղում, ծառայողի ընտանիքում: Երկու տղայրների կողքին մեծանում էր այդ ընտանիքի միակ դուստրը: Գերազանցությամբ ավարտելով դպրոցը, Լորետան հաջողությամբ ընդունվում և ավարտում է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը, ապա աշխատում հացրեմի Զանգեզուրում: Լորետան հարս է գնում Լեհիմական և 15 տարիների բնակությունը հոգով ու սրտով կապվում քաղաքին: Լորետան իր կենսախնդրությամբ և բարության ուրախությամբ էր պատճառում հարազատների ընտանիքներին: Աշխատում էր հոկուր հաստոցների գործարանում, հարգված էր կոլեկտիվում: Այդ օրն էլ գործարանից դուրս եկավ՝ որդուն դպրոց ճանապարհելու համար: Ավա՛ղ, որդու հետ էլ զոհվեց տանը՝ Կալինինի 16 «ա» շենքում: Իսկ թե որքան մեծ էր սերը որդու նկատմամբ, գիտե՛լիք բոլոր հարազատները: Քննություն ատաց պատկում էր որդու՝ Արսենի կողքին և կարող չէր առնում ասես: Այդպես էլ՝ իրար գրկախառնված, անժամանակ հեռացան այս կյանքից: ԱՐՍԵՆ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել էր 1980 թ., Լեհիմականում, տղերք Կրոպակայի անվան № 28 միջն. դպրոցի 2-րդ դասարանում: Մեծ ապագա էր սպասվում այս փոքրիկին: Մեծ էր նրա հետաքրքրությունների շրջանակը հատկապես Երկիր մոլորակի և տիեզերքի նկատմամբ: Տարբերվում էր իր հասակակիցներից թե՛ խելքով, թե՛ ճարակությամբ: Ցանկացած պահին կարողանում էր ճիշտ կողմնորոշվել: Ձուր չէր, որ հորեղբոր կինը կրկնում էր հաճախ՝ «Զանգեզուրցու խելք է, լեհիմականցու սրամտություն»:

Համգասություն ձեր շիրիմներին Լորետա և Արսեն Հարությունյաններ, դուք հավերժ կենդանի կմնաք մեր սրտերում:



ԱՆՉՈՒՆ ՎԻՇՏՐ ՍՐՏՈՒՄ

Հուզված էր, աչքերը խոնավ, ձեռքերն թանձրացրած մարդկանց՝ եղբոր գոհված ընտանիքի լուսանկարներն էին: —Ուզում եմ, որ մարդիկ տեսնեն ու ճանաչեն նրանց, այն անբախտ լավն էին նրանք, — արցունքները հագիվ զսպելով պատմում է Աշոտը: — Դո՛ւք ասեք, ինչ պե՛տք դիմանանք այս վճռաբեկ...

մասին: Դու անբեղձատ կըր կընում ես, որ նրանք լավն էին: Ես չեմ կասկածում: Աղետը տարավ ըզրոր լավերին, ջոկեց ու տարավ... Հովհաննեսը 27 տարեկան էր: Հայրը ուխտ էր կապել, և որդու ծնվելուց հետո յոթ տարի նրա մազերը չկտրեցին: Մենդյանը 7-րդ տարեկիցի օրը միայն շայդ արարողությունը կատարեցին «Սուրբ Հովհաննես» վանքում, մանկան գանգուրները թողնելով եկեղեցու պատերի տակ, որպեսզի Աստված ողորմած լինի նրա հանդեպ: Ավաղ, Հովհաննեսը դրանից հետո չսպրեց ընդամենը 20 օրում: Չարաբաստիկ 7-ին կնոջ և երեխաների հետ տանն էին՝ «Ծոռանկյունի» թաղամասի բարձրա-

հարկերից մեկում, ուր էլ կնքեցին իրենց դաժան մահ կանացուն: Ռուզաննան բարի, ծրարացած, հավատարիմ կին էր ու գործավարձ մայր: Նա այս աշխատանքում ունեցավ ընդամենը 24 տարվա կյանք, սակայն վաստակեց շատ-շատերի հարգանքն ու երախտագիտությունը՝ իր զգայուն, մարդկային վերաբերմունքի, տաք սրտի ու նուրբ հոգու համար: Երիտասարդ ամուսիններին գտան աղետից 16 և 17 օր հետո, հայրը հավերժ գրկել էր որդուն, մայրը՝ հավանաբար քնից նոր ելած դստրիկին: Թող հայրենի հողը թեթև լինի ձեզ վրա, երիտասարդ և մանուկ Մարգարյաններ:



ՄԱՅՐԸ ԵՎ ՈՐԳՆՆԵՐԸ

ԼԻԻԿ ՈՍՎԱՆՅԱՆԸ 48 տարեկան էր: Նայելով ներքան չէր ասի, որ դուռն ու դաժան ճակատագիր է ունեցել: Միայնակ մեծացրել էր չորս երեխաների: Երբեքին ամուսնացրել էր: Եկել էր թոռնիկներով ուրբախանալու, բաճակից մեկ ամիս առաջ վերադարձած որդու մասին հոգ տանելու անհամեմատ դյուրին ժամանակը: Աշխատում էր գույպեղե-



ՄԱՅՐԸ ԵՎ ՈՐԳՆՆԵՐԸ

նի արտադրական միավորումում: Բազմիցս արժանացել էր պատվոգրերի ու շնորհակալագրերի, ձեռնարկության մեծ ու փոքրի սիրուն ու համակրանքին: Որդին՝ ԳԱՆՈՒՍՏԸ չհասցրեց տոնել իր կյանքի 30-րդ տարին, որ լրացավ մահվան օրը հետո՝ դեկտեմբերի 25-ին: Բայց հենց այդ ետև օրը լույս աշխարհ կհավ փոքրիկը՝ ապրելու և հիշեց



ՄԱՅՐԸ ԵՎ ՈՐԳՆՆԵՐԸ

նելու իր հոր ծնունդը: Մյուս որդին՝ ԱՇՈՏԸ, սիրունատես ու սեռաշյա էր, նոր էր թեկնախել կյանքի 21-րդ տարին, այնպես սիրում էր ապրել ու երազել: Երազում էր պահել ու փայլափայլ աչքերն դառնություններ տեսած մորը, նրա զեմքին միշտ ժպտ տեսնել: Արհամարհելի կտրեց տիկին Լիլիկի և նրա երկու անմեղ զավակներին կշանքը, վիշտ ու ցավ պատճառելով հարազատներին ու ծանոթներին:

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրերս Լեհիստանում էին գտնվում ԽՍՀՄ Էլեկտրոնային արդյունաբերության և ուսուցիչությունների միջնադպրոցների վ. Օյմկոն և վ. Կոլեսնիկովը: Նրանց այցելության նպատակն էր ծանոթանալ աղետի գոտում եղած իրենց եմթակայության ձեռնարկությունների վերականգնման, վճարատվողության սոցիալ-կենցաղային և մի շարք այլ հարցերի: Հանձնարարությամբ, որի մեջ էին նաև ԽՍՀՄ Միջնադպրոցների խորհրդի, Լեհիստանի քաղաքային կոմիտեի և քաղաքային խորհրդի ղեկա-

վար աշխատողներ, եղան ձեռնարկություններում, հանդիպումներ ունեցան աշխատավորական կոլեկտիվների, հասարակայնության ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին ինչպես արտադրական շենքերի շինարարությանը վերաբերող, այնպես էլ բանվոր-ժառանգողների հուզող շատ հարցեր: Քննարկվեցին ժամանակավորապես ստեղծված և հիմնական մասնաշենքերի կառուցման տեղից և աշխատանքային պայմաններին վերաբերող շատ հարցեր:

Բարձրացվեց մոտ ժամանակներս բանվոր-ժառանգողներին հանրագոտ աշխատանքում ընդգրկելու հարցը՝ մինչև և նոր մասնաշենքերի կառուցումը: Նշվեցին կոնկրետ ժամկետներ այդ ամենի իրականացման համար: Միջնադպրոցները գործարանների ղեկավարության հետ մեկտեղ, որոշեցին ոչ միայն չկրճատել մինչեղևրաշարժյան հզորությունները, այլև ներդնել նոր տեխնիկա և տեխնոլոգիա՝ ընդունելով ժամանակակից բոլոր պահանջները բավարարող ձեռնարկություններ: Բացի այդ, աշխատուժի ուսցիտակալ օգտագործման նպատակով ձեռնարկություններում կազմակերպվելու է լայն սպառման ապրանքների արտադրություն:

Դ ժ վ ա ր ի ն պ ա հ ի ն Հայաստանի նետ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

րիքն զգում ենք, մենք անհրաժեշտ կարգադրություններ կանենք նրանց ուղարկելու Հայաստան՝ անհրաժեշտ դեղորայքով հանդերձ: Մեր քաղաքապետարանն այսօր ձեռնամուխ է եղել հանգանակություններ կազմակերպելու և հավաքվածը Հայաստան ուղարկելու գործին: Մենք ձեզ տեղյակ կպահանք ընթացքի մասին:

Քեմբրիջ-Երևան եղբայրացած քաղաքների ընկերակցություն ՔԵՄԲՐԻՋ-ԵՐԵՎԱՆ

Հայ ժողովրդի կրած մեծ ողբերգության և փորձության այս օրերին պատիվ ունենք ձեզ տեղեկացնելու, որ Գալուստ Կյուպենկյան հիմնադրամի վարչական խորհուրդը ձեր տրամադրության տակ է դնում մեկ միլիոն ամերիկյան դոլարի վարկ աղետի ենթարկված ժողովրդին օգնելու համար: Այս հատուկ ֆոնդի հետ միասնամանակ կարճ ժամկետում Աերոֆոտի հանձնառությամբ Հայաստան կուղարկվեն դեղորայք և բժշկական սարքեր, որոնց անհրաժեշտությունը մեզ հուշել է Լիաբոնի ՍՍՀՄ դեսպանությունը:

ԺՈՋԵ ԴԵ ԱՋԵՐԻՆՈՒ ՊԵՐՈՒԳԱՍ Կյուպենկյան հիմնադրամի նախագահ

«Կարիտաս Իտալիանա» ընկերությունը պատրաստ է ուղարկել վերականգնող և անհատական քննապարկեր:

ՋՈՒՋԵՊԵ ՓԱՍՏՆՈՒ «Կարիտաս Իտալիանա» ընկերության տնօրեն

Բունուս Այրեսի համալսարանի 18-ին Հայաստանի աղետյալներին հասցրեց առաջին բեռները՝ վեց տոննա դեղորայք և սննդամթերք:

Դեկտեմբերի 16-ին Բունուս-Այրեսի հայությունը Բունուս-Այրես-Երևան հատուկ երթուղով աղետյալներին ուղարկեց 33 տոննա բեռներ՝ միս, կաթ, դեղորայք:

Իսկ 13-ին և 16-ին Մոսկվայի վրայով ուղարկվեցին ևս ութ տոննա բեռներ՝ սննդամթերք, դեղորայք, հագուստ: Առաջիկա օրերին Բունուս-Այրեսից սպասվում են նոր բեռներ, որոնք կուղարկվեն երկու ինքնաթիռների միջոցով:



ՆԱՍԱԶԳՈՒՄ ԷԻՆ ԱՂԵՏԸ

Մամր է անգամ դեկտեմբերյան խելախել օրերի վերնուրը: Վայրկյանների ընթացքում հայ յոց բարեշեն հողը վերածվեց փլատակների, հանգավ ավան դապաշտ գյուղերում օջախի ծուխը: Սև ձյուն մաղվեց մեր գլխին, ինքներս էլ չիմացանք՝ ինչպես որբացան ժիրակի դաշտն ու Լոռվա լեռները, մեր մանուկներն ու որդեկություն մայրերը:



ՆԱՍԱԶԳՈՒՄ ԷԻՆ ԱՂԵՏԸ

ԳԵՎՈՐԳՍ ՏՃՎԵԼ Է 1974 թվականի դեկտեմբերի 25-ին, Լեհիստանում: Սովորում էր Ավետիք Իսահանյանի անվան դպրոցի 7-րդ դասարանում: Նա ուներ այն հատկությունները, որոնց շնորհիվ և հարս գատները էին շատ սիրում և բոլորը: Գեղեցիկ էր, բարի ու հեզ: Նմանը չկար իմ ծանոթների մեջ: Այդպես էլ տուն չդարձավ դպրոցից: Միակ եղբայրս էր, տան միակ ծուխը...

Ջոհվածների թվում էր նաև իմ սիրելի եղբայրը՝ ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՎԱԶԳԻ ՀԱԿՈՒՅԱՆԸ և սիրելի հորեղբայրս՝ ՀԱՅԿ ՍԱՐԳՍԻ ՀԱԿՈՒՅԱՆԸ: Դեռ 15 տարեկան էր եղբայրս, երբ ահավոր երկրաշարժը իլեց նրա ջախել ու ծաղկուն կյանքը:

Ահավոր աղետով ընդհատվեց նաև հորեղբորս՝ ՀԱՅԿԻ կյանքը, որ 35 տարին նոր էր բոլորել: Աղետի նախօրեին գոհվածներից շատերը նախազգացել էին գալիքը: Հորեղբայրս կանխագուշակել էր, որ կապրի մինչև 35 տարի:

«ԿՈՒՄՍՏՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԱԿԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄ ԿՈՒՄՍՏՐԻԻ ՏՊԱՐԱՆ ՊԱՏՎԵՐ ՁԵ 2044